ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. մարտի 7

թիվ 24 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ << ԱՇՏԱՐԱԿԻ Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ԵՎ << ԾԻԼՔԱՐԻ ԽՈՍՐՈՎ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ- ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան հիմնական դպրոց >> և << Ծիլքարի Խոսրով Ասլանյանի անվան միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Իշխան Բարսեղյանի, Սիրան Ասատրյանի, Արիս Թովմասյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2.Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 9 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2013 թվականի մարտի 11-ից ավարտել 2013 թվականի մարտի 21-ին:

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ